ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

2025

ԱԳՐՈՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ (ՖԵՐՄԵՐԱՅԻՆ) ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ի՞նչ է շահույթի նորման:**

1) եկամտի և արտադրության ծախքերի գումար
2) եկամտի և արտադրության ծախքերի տարբերություն
3) եկամտի և արտադրության ծախքերի արտադրյալ
4) եկամտի և արտադրության ծախքերի հարաբերություն

2 **Բերվածներից ո՞րը մարքեթինգի ռազմավարական պլանավորման փուլ *չէ:***

1) տակտիկայի իրականացում
2) ձեռնարկության գերխնդրի որոշում
3) իրավիճակային վերլուծություն
4) այլընտրանքների մշակում

3 **Բերվածներից ո՞րը անձնակազմի կառավարման մեթոդ *չէ:***

1) տնտեսական
2) նորմատիվային
3) կազմակերպահրամայական
4) սոցիալ-հոգեբանական

4 **Ո՞րն է շուկայական մրցակցության տարր:**

1) պարապմունքը
2) պարապուրդը
3) պահանջարկը
4) պահանջմունքը

5 **Նշվածներից ո՞րն ակոսային ջրում *չէ:***

1) կաթիլահոսքայինը
2) հոսանուտը
3) լճացվողը
4) չլճացվողը

6 **Նշվածներից ո՞ր պահանջն է համապատասխանում ջերմոցների համար ընտրվող հողամասին:**

1) մոտ լինի մթերվող պահեստներին
2) ունենա 2^0-5^0 թեքություն
3) գրունտային ջրերը լինեն մինչև 50 սմ խորությամբ
4) պաշտպանված լինի հարավային քամիներից

7 **Ի՞նչ պատվաստման եղանակ են օգտագործում ֆիլոքսերայով վարակված տարածքներում:**

1) կողանցիկ
2) գլանաձև
3) շերտավոր
4) լեզվակով

8 **Ի՞նչ *չեն* օգտագործում ծածկած գրունտում որպես ծածկոց:**

1) պոլիստիրոլ
2) ապակի
3) պոլիէթիլեն
4) պոլիամեդ

9 **Ո՞ր ճյուղն է անասնաբուծության առաջատարը Հայաստանում:**

1) թռչնաբուծությունը
2) ոչխարաբուծությունը
3) տավարաբուծությունը
4) խոզաբուծությունը

10 **Որո՞նք են գարեջրի արտադրության մնացուկները:**

1) քուսպը և շրոտը
2) ցորենի թեփը և հատիկի ջարդվածքը
3) դիրտը և խմորասնկերը
4) մզուկը և մաթը

11 **Բրդաթելում ո՞ր տեսակն է ամենաբարակը:**

1) քստամազը
2) անցողիկ մազը
3) աղվամազը
4) մեռած և չոր մազը

12 **Ո՞րն է սպանդային զանգվածը:**

1) մսեղիքի զանգվածի հարաբերությունն է ոսկորների զանգվածին
2) կենդանի զանգվածի հարաբերությունն է մսեղիքի զանգվածին
3) մսեղիքի ու ներքին ճարպի կշիռն է
4) սպանդից ստացված մաքուր ելունքն է

13 **Ինչի՞ համար է նախատեսված МВУ-0,5А կախովի պարարտանյութացրիչը:**

1) դաշտերում և այգիներում հանքային պարարտանյութը հողի մակերևույթին ցրելու, ինչպես նաև սիդերատների սերմերը շաղացան եղանակով ցանելու համար
2) պինդ հանքային պարարտանյութերի, գիպսի և կրային հանքանյութերի մակերեսային ցրման համար
3) ըստ ընդգրկման լայնության պարարտանյութը հավասարաչափ բաշխելու համար
4) փոշենման պարարտանյութերի փոխադրման և մակերեսային ցրման համար

14 **Ինչի՞ց է СЗ-3,6А շարքացանի ցանիչ ապարատը ստանում շարժումը:**

1) շարքացանի վրա տեղադրված հիդրոշարժիչից
2) տրակտորի ՀԱԼ –ից /հզորության անջատման լիսեռից
3) շարքացանի վրա տեղադրված էլեկտրական շարժիչից
4) շարքացանի անիվից

15 **Ինչի՞ համար է կարտոֆիլաքանդիչ մեքենան նախատեսված:**

1) կարտոֆիլի մարգաթմբերը քանդելու, պալարները հողից առանձնացնելու և բունկերի մեջ հավաքելու համար
2) կարտոֆիլի մարգաթմբերը քանդելու, պալարները հողից առանձնացնելու և դաշտում լասավորելու համար
3) կարտոֆիլի մարգաթմբերը քանդելու, պալարները հողից առանձնացնելու, պարկերի մեջ կուտակելու և պարկերը դաշտի տարբեր հատվածներում թողնելու համար
4) կարտոֆիլի մարգաթմբերը քանդելու, պալարները հողից առանձնացնելու և տրանսպորտային միջոցի վրա բարձելու համար

16 **Ո՞րն է հացահատիկահավաք կոմբայնով կատարված տեխնոլոգիական գործընթաց:**

1) հացահատիկը ախտահանում է
2) հացահատիկը տեսակավորում է ըստ երկարության
3) հացահատիկը տեսակավորում է ըստ զանգվածի
4) հացահատիկը կուտակում է բունկերի մեջ

17 **Որո՞նք են գետային հոսքի բնութագրերը:**

1) ջրի ծախսը, հոսքի մոդուլը, հոսքի ծավալը, հոսքի շերտը, հոսքի գործակիցը
2) հիդրոմոդուլը, ոռոգման նորմը, ջրման նորմը, ջրուների թիվը, մակերեսային հոսքի մոդուլը
3) սելավների քանակը, ժամկետները, հաճախականությունը, ինտենսիվությունը, հեղեղները
4) բույսերի ջրապահանջը, լանջերի թեքությունը, հողի ինֆիլտրացիան, ափապաշտպան կառուցվածքները

18 **Ի՞նչ նպատակներով են օգտագործվում հիդրոտեխնիկական կառուցվածքները:**

1) երկրաշարժերի, կլիմայական փոփոխությունների, երաշտի կանխատեսման, մթնոլորտի աղտոտման, միջավայրի աղբոտման և աղտոտման դեմ պայքարելու նպատակներով
2) հողերը կադաստրային խմբերի բաժանելու, բոնիտման, տնտեսական գնահատման հողի հարկի և վարձավճարների սահմանման, հողային հարաբերությունների կարգավորման նպատակներով
3) մակերեսային հոսքի կարգավորման, ջրային պաշարների կուտակման, ջրի տեղափոխման և բաշխման, ոռոգման համակարգերի ջրամատակարարման, հեղեղների և սելավների դեմ պայքարելու, կանխարգելելու և հիդրոէներգետիկ նպատակներով
4) ռելիեֆի թվայնացման, տեղագրական քարտեզների մշակման, կադաստրային հանույթների իրականացման, հողաշինարարական սխեմաների մշակման և հողերի դեգրադացիան գնահատելու նպատակներով

19 **Ի՞նչ նպատակով են կատարում հողերի չափագրման, հաշվառման, գրանցման հողաշինարարական աշխատանքներ:**

1) անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների, վերլուծությունների, պետական կառավարման մարմինների, անշարժ գույքի շուկայի մասնակիցների և անշարժ գույքի շուկայի իրավիճակի վերաբերյալ հասարակությանը իրազեկելու նպատակով
2) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի, օգտագործման իրավունքի, հիփոթեքի, հողամասի կառուցապատման, սերվիտուտի, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գույքային իրավունքների ծագման, դադարման, փոխանցման, փոփոխման պետական գրանցումը իրականացնելու և հողային հարաբերությունները կարգավորելու համար
3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գլխավոր հատակագիծը պարզաբանելու, հողերի որակական և տնտեսական գնահատում կատարելու, ցանքաշրջանառություն կազմակերպելու, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները բարելավելու համար
4) հողամասը հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքների սեփականության իրավունքի պարզաբանման, հողամասերի ծածկագրերի փոփոխման, ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, կադաստրային արժեքն անփոփոխ պահելու համար

20 **Ի՞նչպես է կատարվում մակերեսային հոսքի կարգավորումը ջրամատակարարման, հիդրոէներգետիկայի և արդյունաբերության բնագավառներում:**

1) ՀԷԿ-ի միջոցով, ոռոգումը՝ դրենաժային համակարգով
2) դրենաժային համակարգով
3) ջրամբարների միջոցով
4) պոմպակայանների միջոցով, ոռոգման համակարգով

21 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Կորիներով ջրումների դեպքում դրանց դասավորությունը լինում է ուղղահայաց, թեք և քառակուսի:
2. Սածիլներն անհրաժեշտ է ջրել ոչ հաճախակի և բարձր նորմաներով:
3. Պտղատու և խաղողի այգիների վեգետացիոն վերջին ջրումը կատարվում է բերքի հասունացումից 15-20 օր առաջ:
4. Այգեթաղի աշխատանքները հեշտացնելու համար անհրաժեշտ է խաղողի այգիներն աշնանը այգեթաղից առաջ ջրել:
5. Հողում աղերի բարձր կոնցենտրացիան նպաստում է սննդատարրերի հաշվեկշռի կարգավորմանը:
6. Խոնավալիցքավորման ջրումներով հողը խոնավացվում է մինչև 1,5 սմ խորությամբ:
7. Գյուղատնտեսական մշակաբույսերը ոռոգվում են մակերեսային, անձրևացման, ենթահողային և կաթիլային եղանակներով:
8. Թարմացման ջրումները բարձրացնում են բույսերի տրանսպիրացիան և որոշ չափով հողի մակերեսին մոտ օդի ջերմաստիճանը:
9. Ջրումների ժամկետները դաշտային պայմաններում կարելի է որոշել ըստ արևոտ օրերի:

22 **Հետևյալ պնդումներից 3-ը ճիշտ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. Սենսորները հնարավորություն են տալիս որոշել հողի վնասակար էնտոմոֆաունան:
2. Իռիգացիոն էրոզիայից խուսափելու համար ջրի շարժման արագությունը չպետք է գերազանցի 0,1-0,2 մ/վ-ը:
3. Տենզոմետրը թույլ է տալիս որոշելու հողում ազոտի և ֆոսֆորի նույնիսկ նվազագույն քանակությունը:
4. Հողի խոնավության պոտենցիալի որոշման չափման միավորը սենտիբարն է:
5. ԴՍԽ-ն կախված է հողի վնասատուներով աղբոտվածությունից, սննդատարրերի քանակից:
6. Դաշտում ոռոգման ջուրն ակոսներին և մարգերին արդյունավետ հասցնելու համար կիրառվում են հողային թուլացուցիչ վակումային թունելներ:
7. Ոռոգման նորման կախված է տեղանքի ծովի մակերևույթից ունեցած բարձրությունից, պարարտացումից, մշակության որակից:
8. Գումարային ջրասպառման նորման տերևներից դեպի արմատ փոխանցվող ջրի քանակությունն է:
9. Կաթիլային ոռոգման դեպքում, ըստ մշակաբույսերի, հողատեսակի և կլիմայական պայմանների, մեկ օրվա ընթացքում մեկ հեկտարի համար անհրաժեշտ է 400-700 մ^3/հա ջուր:

23 **Նշել նորածին հորթերին բնորոշ 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. կրծքավանդակը խորն է, գերազանցում է վերջավորությունների երկարությանը
2. ունեն համեմատաբար կարճ վերջավորություններ, երկար, ոչ լայն իրան, կարճ ու լայն գլուխ
3. սրբոսկորի բարձրությունը հավասար է մնդավի բարձրությանը
4. բազմախոռոչ ստամոքսի բաժիններից գործում է շրդանը
5. համեմատաբար երկար վերջավորություններ, կարճ, ոչ լայն և ոչ խոր իրան, կարճ ու լայն գլուխ
6. սրբոսկորի հատվածում բարձրությունը էապես գերազանցում է մնդավի բարձրությանը
7. սկսում են խոտ ուտել 21 օրականում
8. օրական կերակրում են 10 կգ կաթով
9. բազմախոռոչ ստամոքսի բաժիններից գործում են գիրքը, կտրիչը, ցանցը

24 **Նշել 3 ճիշտ պնդումները: (3 միավոր)**

1. Ինտենսիվ աճեցման դեպքում կովերը կազմում են տավարի սեռահասակային խմբերի մեծամասնությունը:
2. Լակտացիան կովի ծնից մինչև հղի ցամաքի շրջանի սկսելն է:
3. Կենդանու բացարձակ քաշաճը ծնվելուց մինչև աճեցման որոշակի ժամանակահատված ընկած կենդանու զանգվածն է:
4. Արոտների օգտագործման դեպքում նպատակահարմար է տավարի մսացու մատղաշը իրացնել 38-42 ամսականում, երբ կենդանի զանգվածը կազմում է 450-480 կգ:
5. Տավարի սիլոսային և սենաժային բտման ընթացքում կերաբաժնում նրանց սննդարարությունը պետք է կազմի 10-25%:
6. Գառնենին ստացվում է 5 ամսական գառից:
7. Ոչխարի մսի յուրահատուկ հոտը պայմանավորված է հիրսինաթթվի պարունակությամբ
8. Նորմայում ոչխարները զուգավորվում են 5-6 ամսականում:
9. Մաքիների հղիությունը տևում է 6 ամիս:

25 **Նշվածներից երեքը հողի մակերեսային մշակության մեքենաներ են**: **Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. անթև գութանները
2. սկավառակավոր ցաքանները
3. խորը փխրիչները
4. հողխորացուցիչները
5. ատամնավոր ցաքանները
6. ճեղքավոր խլուրդիչը
7. երեսվարիչները
8. շնեկային գութանները
9. նախագութանիկները

26 **Նշվածներից երեքը կերի կուտակման, բերքահավաքի, մեքենաներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. շարային հնձիչները
2. սերմազտիչները
3. ֆրեզները
4. հացահատիկահավաք կոմբայնը
5. գլանաձև տրիները
6. ախտահանիչ մեքենաները
7. հակավորող մեքենաները
8. ժապավենային փոխադրիչները
9. տեսակավորիչ մեքենաները

27 **Ո՞ր 3 ցուցանիշներն են մասնակցում հողերի կադաստրային գնահատմանը (բոնիտում): (3 միավոր)**

1. աշխարհագրական կոորդինատները, ստորերկրյա ջրերի խորությունը, հողի խտությունը
2. հողի իրավական կարգավիճակը, նպատակային նշանակությունը, գործառնական նշանակությունը
3. հողի աղակալման աստիճանը, քարքարոտությունը, էրոզացվածությունը, հողամասի, թեքությունները
4. մշակաբույսերի կազմը և կառուցվածքը, հողամասի երկրաչափական տեսքը, համախմբվածության գործակիցը
5. բույսերի վեգետացիայի տևողությունը, ցանքի ժամկետները, ցանքաշրջանառության տիպը
6. հողի մեխանիկական կազմը, ջրակայուն ագրեգատները
7. ճանապարհներից ունեցած հեռավորությունը, ջրաղբյուրներից ունեցած հեռավորությունը, գրունտային ջրերի տեղադման խորությունը
8. հողի pH, Հողի տիպը, հումուսի քանակը, հումուսային հորիզոնը
9. արևաշող օրերի թիվը, մթնոլորտային տեղումների քանակը, քամիների ուղղությունը և ուժգնությունը

28 **Ո՞ր 3 պնդումները *չեն* հանդիսանում ոռոգման համակարգի տարրեր: (3 միավոր)**

1. մայր ջրանցքը, միջտնտեսային բաժանարար ջրանցքները, տնտեսային ջրանցքը
2. դրենաժները, հավաքիչները, ափապաշտպան կառուցվածքները
3. տեղամասային ջրանցքը, դաշտային խողովակաշարերը, ժամանակավոր ոռոգիչները
4. ջրման տեխնիկան, պոմպային կայանը, ջրի աղբյուրը
5. ուղղաձիգ դրենաժները, դարավանդները, հիդրոէլեկտրոկայանները, ջրակարգավորիչ անտառաշերտերը
6. մշտական և պարբերաբար գործող ջրանցքները, ջրհեռատար ջրանցքները
7. գետ ջրընդունիչները, շիթուղղորդիչ կառուցվածքները, ջրի շարժման արագությունը և խորությունը կարգավորող կառուցվածքները
8. սելավատարները, գետ ջրընդունիչները, կոլեկտորները
9. կաթիլային, անձրևացման, ենթահողային ոռոգման համակարգերը

29 **Տրվածներից 3-ը, ըստ գործողությունների ոլորտի, կառավարչական որոշումների տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. կազմակերպական
2. տեխնոլոգիական
3. մարդաբանական
4. ժամանակագրական
5. նկարագրական
6. տեղեկատվական
7. շարունակական
8. հետևողական
9. տեխնիկական

30 **Տրվածներից 3-ը առևտրային մարքեթինգի, ըստ կիրառության տեսանկյունի, տեսակներ են: Նշել դրանց համարները: (3 միավոր)**

1. սպառողական
2. ֆինանսական
3. հաշվապահական
4. արմատական
5. արտադրական
6. վարձակալական
7. մեկնարկային
8. ներդրումային
9. մաքսային